«Վարազդատ Առստամյան» Ա/Ձ ,,VarazdatArstamyan,, I/E

ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Գորիս, Գետափյան 2/1
Հեռ.՝ +374 94 30 10 16

***«Հաստատում եմ»***

***«Վարազդատ Առստամյան» Ա/Ձ տնօրեն՝***

______________

***Վ. Առստամյան***

***«__27__»__10__2022թ.***

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՌՍՏԱՄՅԱՆ 77970633

# ***Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն***

## ***ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքին պատկանող Գալստյան 64 հասցեում գտնվող թվով երկու անավարտ շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ***

Սույն եզրակացությունը տրվում է համաձայն ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի համայնքապետարանի և «Վարազդատ Առստամյան» Ա/Ձ միջև առ.25. 10.2022թ. կնքված թիվ Ե-10/22 պայմանագրի:

Եզրակացություն տալու նպատակով «Վարազդատ Առստամյան» Ա/Ձ կողմից (ՔՊԼ 18366 տրված 14.06.2022թ.) կատարվել է ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքին պատկանող Գալստյան 64 հասցեում գտնվող թվով երկու անավարտ շինությունների ակնադիտական հետազննություն, չափագրման ու լուսանկարման աշխատանքներ:

### ***Շինությունների ծավալահատակագծային և կոնստրուկտիվ լուծումները***

Գորիս համայնքին պատկանող թվով երկու շինությունների շինարարությունը սկսվել է 1992թ. և ինչ-ինչ պատճառներով շինարարությունն ավարտին չի հասցվել: Կառուցվել են շինությունների հիմքերը և առաջին հարկի պատերը (տես նկ. 1): Շինությունները տեղադրված են մեծ թեքությամբ տեղանքում: Շինությունների առաջին հարկերի սխեմատիկ հատակագծերը բերված են նկար 2-ում: Շինությունները հատակագծում ուղղանկյունաձև են: Թիվ 1 շինությունն ունի 11.6x19.9մ արտաքին եզրաչափեր, իսկ թիվ 2 շինությունը՝ 11.6x39.5մ արտաքին եզրաչափեր:



Նկ. 1 Շինությունների տեսքերը




2 Շինությունների սխեմատիկ հատակագծերը (չափերը մ-ով)

Շինությունների կոնստրուկտիվ լուծումը տրված է միաձույլ երկաթբետոնե (ե/բ) պատերով: Հիմքերը ժապավենային են, իրականացվել են միաձույլ ե/բ-ով: Պատերն երեսապատվել են բազալտաքարերի սալիկներով:

***Հետազննության արդյունքում պարզվել է.***

1. Գորիս համայնքին պատկանող թվով երկու շինությունների շինարարությունը սկսվել է 1992թ. և ինչ-ինչ պատճառներով շինարարությունն ավարտին չի հասցվել, մոտ երեք տասնամյակ գտնվել են բարձիթողի վիճակում և որի պատճառով միաձույլ ե/բ կոնստրուկցիաները ստացել են ուժեղ վնասվածքներ (տես նկ. 1), մասնավորապես.

- ամրանների բետոնե պաշտպանիչ շերտը չունի բավարար հաստություն, ամրանները մերկացել են և ստացել են համատարած ուժեղ կոռոզիա, բետոնը սառնաքայքայվել է,
- պատերի ամրանային արտաթողերը կտրվել ու հեռացվել են կամ բացակայում են,
- պատերի երեսապատման սալիկները ապամոնտաժված են:

***Հիմնվելով հետազննության արդյունքներին եզրակացնում ենք.***

1. Գորիս համայնքին պատկանող Գալստյան 64 հասցեում գտնվող թվով երկու անավարտ շինությունների շինարարական աշխատանքներն իրականացվել են ցածր որակով և մոտ երեք տասնամյակ գտնվելով բարձիթողի վիճակում, դրանց կրող կոնստրուկտիվ տարրերում առաջացել են անթույլատրելի վնասվածքներ:

2. Գորիս համայնքին պատկանող Գալստյան 64 հասցեում գտնվող թվով երկու անավարտ շինությունների շինարարությունն ավարտին հասցնելը նպատակահարմար չէ սեյսմակայունության տեսանկյունից և դրանք ենթակա են ամբողջությամբ ապամոնտաժման:

Կատարող՝

Ճարտարագետ, տ.գ.թ. Հ. Խլղաթյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

# ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՂ 18366

( լիցենզիայի համարը )

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՀԵՏԱԶՆՆՈՒԹՅՈՒՆ

( գործունեության տեսակը )

Տրված է «14 ՀՈՒՆԻՍԻ 2022թ.» ՎԱՐԱԶԴԱՏ ԱՌՍՏԱՄՅԱՆ ԼԵՎՈՆԻ Ա/Ձ, ՍՅՈՒՆԻՔ, ԳՈՐԻՍ, ԳԵՏԱՓՆՅԱ Փ. 2, 1

( լիցենզիան տալու ամսաթիվը, իրավաբանական անձի անվանումը ու գտնվելու վայրը
իսկ անհատ ձեռնարկատիրոջ համար ազգանունը, անունը ու բնակության վայրը )

Գործողության ժամկետը՝ ԱՆԺԱՄԿԵՏ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

(ստորագրությունը)
Կ.Տ.

Ա. ԴՈՒԼԱՐՅԱՆ
(անունը,ազգանունը)

«Վարազդատ Առստամյան» Ա/Ձ ,,VarazdatArstamyan,, I/E

ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Գորիս, Գետափյան 2/1
Հեռ.՝ +374 94 30 10 16

***«Հաստատում եմ»***

***«Վարազդատ Առստամյան» Ա/Ձ տնօրեն՝***

Վ. Առստամյան

«31» 10 2022թ.

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՌՍՏԱՄՅԱՆ 77970633

## ***Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն***

***ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքին պատկանող Գալստյան 64 հասցեում գտնվող թվով երկու անավարտ շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ***

Սույն եզրակացությունը տրվում է համաձայն ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի համայնքապետարանի և «Վարազդատ Առստամյան» Ա/Ձ միջև առ.25. 10.2022թ. կնքված թիվ Ե-10/22 պայմանագրի:

Եզրակացություն տալու նպատակով «Վարազդատ Առստամյան» Ա/Ձ կողմից (ՔՊԼ 18366 տրված 14.06.2022թ.) կատարվել է ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքին պատկանող Գալստյան 64 հասցեում գտնվող թվով երկու անավարտ շինությունների ակնադիտական հետազննություն, չափագրման ու լուսանկարման աշխատանքներ:

### ***Շինությունների ծավալահատակագծային և կոնստրուկտիվ լուծումները***

Գորիս համայնքին պատկանող թվով երկու շինությունների շինարարությունը սկսվել է 1992թ. և ինչ-ինչ պատճառներով շինարարությունն ավարտին չի հասցվել: Կառուցվել են շինությունների հիմքերը և առաջին հարկի պատերը (տես նկ. 1): Շինությունները տեղադրված են մեծ թեքությամբ տեղանքում: Շինությունների առաջին հարկերի սխեմատիկ հատակագծերը բերված են նկար 2-ում: Շինությունները հատակագծում ուղղանկյունաձև են: Թիվ 1 շինությունն ունի 11.6x19.9մ արտաքին եզրաչափեր, իսկ թիվ 2 շինությունը՝ 11.6x39.5մ արտաքին եզրաչափեր: